ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1951 Общественные науки

Գ. Ղարիբջանյան

# ԲՈԼՇԵՎԻԿ ՍՏԵՓԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԻՂԱՄԻՇՈՒՄ 1917 ԹՎԱԿԱՆԻՆ

Ստեփան Ալավերդյանը (Ստյոպան) հայ ժողովրդի այն խիզախ զավակներից է, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար մղված հերոսական մարտերում։

Լինելով Լենինի—Ստալինի մեծ պարտիայի հավատարիմ սանը, Ալավերդյանն իր ամբողջ գիտակից կյանքը նվիրաբերեց բանվոր դասակարգի ազատագրության վեհ գործին, կոմունիզմի հաղթանակի գործին։ Հայ ժողովուրդը Ալավերդյանին ճանաչում է որպես պրոֆեսիոնալ ռևոլյուցիոների, որպես մասսաների տաղանդավոր կազմակերպչի, որպես բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպությունների ակտիվ գործիչներից ու ղեկավարներից մեկի։

Մոտ 31 տարի է անցել այն օրից, երբ դաշնակ մաուզերիստները գազանաբար խոշտանգելով գնդակահարեցին Ալավերդյանին, բայց մինչև այժմ էլ նրա մասին չկա պատմական և ոչ մի ուսումնասիրություն։ Բոլորովին չի ուսումնասիրվել Ալավերդյանի ռևոլյուցիոն գործունեությունը Սարիղամիշում 1917 թ., երբ նա պարտիայի առաջադրանքով բեղմնավոր աշխատանք է կատարում այնտեղ՝ մասսաներին բոլշևիկների շուրջը համախմբելու, սոցիալիստական ռևոլյուցիայի նախապատրաստման ու իրագործման ուղղությամբ։

Այս հոդվածով փորձում ենք մասամբ լրացնել այդ բացը։

* * *

Ստեփան Ալավերդյանը ծնվել է 1889 թվականին Քութայիսում։ Նրա հայրը՝ Կարապետ Ալավերդյանը սկզբում հաշվետար էր, ապա ծառայող մետաքսի գործարանում։ Ալավերդյանների ընտանիքը բազմամարդ էր բաղկացած 11 հոգուց։ Ստեփանի հայրը հազիվ էր կարողանում իր համեստ աշխատավարձով պահպանել ընտանիքի գոյությունը։

Ստյոպան դեռ փոքր հասակից աչքի էր ընկնում աշխույժ ու հավասարակշռված բնավորությամբ։ Մանկությունից նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի գիտելիքները, բայց հայրը միջոցներ չունենալով տղային կրթություն տալու համար, որոշում է նրան սովորեցնել որևէ արհեստ։ Սակայն մի վրացի ուսուցչուհի, նկատելով Ստյոպայի ընդունակությունները և սովորելու մեծ ձգտումը, ձրի պարապում է նրա հետ և նախապատրաստում՝ ռեալական ուսումնարան ընդունվելու։

1900 թ. Ալավերդյանն ընդունվում է Քութայիսի ռեալական ուսումնարանը, որն ավարտում է 1907 թվականին։

Այս այն տարիներն էին, երբ Անդրկովկասում ընկեր Ստալինի հիմնադրած և աճեցրած բոլշևիկյան կազմակերպությունները ռևոլյուցիոն լայն աշխատանք էին ծավալում բանվոր դասակարգի և աշխատավորական մաս-

սաների մեջ։ 1905—1907 թթ. ռևոլյուցիայի ժամանակաշրջանում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ «...գլխավորում, կազմակերպում և ուղղություն էր տալիս Անդրկովկասի բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն պայքարին՝ տապալելու համար ինքնակալությունը, պայքարելու պրոլետարիատի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրա նվաճելու համար և հանուն բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի վերաճմանը սոցիալիստականի»։[1]

Այս պայքարում խոշոր դեր է կատարում 1904 թ. ամռանն ընկեր Ստալինի նախաձեռնությամբ Քութայիսում ձևավորված բոլշևիկյան Իմերեթ-մինգրելական կոմիտեն, որը ղեկավարում էր Քութայիսի նահանգի պարտիական կազմակերպությունների աշխատանքը։ Շնորհիվ բոլշևիկների եռանդուն գործունեության, Քութայիսին դառնում է ռևոլյուցիոն օջախներից մեկը։

Իմերեթ-մինգրելական կոմիտեն, ռևոլյուցիոն պրոպագանդիստական աշխատանքի համար լայնորեն օգտագործում է նաև Քութայիսի արական գիմնազիայի և ռեալական ուսումնարանի սովորողներին։

Ահա թե ինչ է ասված այդ մասին մի արխիվային փաստաթղթում.

«... Սոցիալ-դեմոկրատական Իմերեթ-մինգրելական կոմիտեն աշակերտների շրջանում իր պրոպագանդան անցկացնում է Քութայիսի արական գիմնազիայի և ռեալական ուսումնարանի աշակերտների միջոցով»։[2]

Իմերեթ-մինգրելական կոմիտեի ղեկավարությամբ պրոպագանդիստական աշխատանքների մեջ է ներգրավվում նաև Ալավերդյանը։ Նա ակտիվ մասնակցություն է ունենում ուսումնարանում կազմակերպված ռևոլյուցիոն խմբակների աշխատանքներին և շուտով դառնում է աշակերտական ռևոլյուցիոն կազմակերպության ղեկավարը։

Բոլշևիկ Ա. Մռավյանը Ալավերդյանի այս ժամանակաշրջանի ռևոլյուցիոն գործունեության մասին ասում է. «...Դեռ գիմնազիայի (պետք է լինի ռեալական ուսումնարանի.—Գ. Ղ.) նստարանից Քութայիսում Ստեփանը աշխույժ, վառվռուն մի պատանի, մասնակցում է տեղական բոլշևիկյան կազմակերպության աշխատանքներին և հեղափոխական մկրտություն ստանում մի շատ պատասխանատու ակտ կատարելով...»։[3]

Այս շրջանում էլ Ալավերդյանը մտնում է բոլշևիկյան պարտիայի շարքերը և մինչև իր կյանքի վերջը մնում է որպես նրա հավատարիմ զինվորներից մեկը։

Դեռ աշակերտական տարիներին Ալավերդյանը ռևոլյուցիոն գործունեության համար հալածվում է ցարական ոստիկանության կողմից, նրան սպառնում են հեռացնել ուսումնարանից, բազմիցս ծեծում են։

1907 թ. ավարտելով Քութայիսի ռեալական ուսումնարանը, Ալավերդյանը գնում է Մոսկվա և ընդունվում Առևտրական ինստիտուտի տընտեսագիտական ֆակուլտետը։ Այս ինստիտուտը դեմոկրատական ուսանողության կենտրոններից էր։ Այստեղ սովորում էին ռուսական ռևոլյուցիայի փոթորիկներով անցած մի քանի հազար երիտասարդներ։

---

[1] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, 1945 թ., էջ 148։

[2] Տես «Զարյա Վոստոկա», 1947 թ., № 70։

[3] «Խորհրդային Հայաստան», 1921 թ., № 104։

Մոսկվայում սովորելու ժամանակ, որպես բոլշևիկյան պարտիայի անդամ, Ալավերդյանն ակտիվ մասնակցություն է ունենում ուսանողական ռևոլյուցիոն շարժումներին և ՌՍԴԲ(բ)Պ Մոսկվայի կոմիտեի հանձնարարականով ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանք է կատարում։[1]

Համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրերից Ալավերդյանն ակտիվ մասնակցություն է ունենում իմպերիալիստական պատերազմի դեմ՝ հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների մղված պայքարի։

1914 թ. նոյեմբերին ռևոլյուցիոն ուսանողության բազմամարդ միտինգում Ալավերդյանը կրակոտ ելույթ է ունենում ցարական կառավարության կողմից Պետական դումայի բոլշևիկյան ֆրակցիայի անդամների ձերբակալման կապակցությամբ։ Իր ելույթում մերկացնելով իմպերիալիստական պատերազմի թալանչիական նպատակները, Ալավերդյանը բացագանչում է՝ «Կորչի իմպերիալիստական պատերազմը. կեցցե դասակարգային պայքարը»։

Իմանալով միտինգի մասին, ոստիկանությունը շրջապատում է Առևտրական ինստիտուտի շենքը, բայց Ալավերդյանին բռնել չի կարողանում։ Նա իր ընկերների հետ միասին ինստիտուտի երկրորդ հարկից բոլշևիկյան թռուցիկներ ցրելով, թաքնվում է ոստիկանության հետապնդումներից։

Մոսկվայում Ալավերդյանը խորապես ուսումնասիրում է մարքս-լենինյան թեորիան, սիստեմատիկաբար կարդում է Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի գրքերն ու հոդվածները։

1915 թվին, ավարտելով Մոսկվայի Առևտրական ինստիտուտը, Ալավերդյանը գալիս է Անդրկովկաս։ Մի քանի ամիս Թիֆլիսում և Քութայիսում աշխատելուց հետո, 1915 թ. վերջին ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան բյուրոյի հանձնարարականով ուղարկվում է Սարիղամիշ՝ ռևոլյուցիոն աշխատանք կատարելու։

Այսպիսով, Ալավերդյանը Սարիղամիշ է գալիս արդեն որպես ռևոլյուցիոն պարտիական-պրոպագանդիստական և պարտիական կազմակերպչական աշխատանքի բազմամյա փորձ ունեցող և տեսականորեն պատրաստված մի բոլշևիկ։

* * *

Իմպերիալիստական պատերազմի տարիներին Սարիղամիշը դառնում է Կովկասյան ռազմաճակատի կարևոր կետերից մեկը։ Այստեղի կայազորն ուներ մոտ 20 հազար զինվոր։ Նա իր մեջ միավորում էր մի քանի թիկունքային զորամասեր ու ստորաբաժանումներ, զինվորական գոսպիտալ և բազմաթիվ զինապահեստներ։ Սարիղամիշում էին գտնվում 39-րդ հետևակային դիվիզիայի մի շարք ստորաբաժանումներ։ Բացի այդ, Սարիղամիշի միջով էին անցնում ռազմաճակատ մեկնող և ռազմաճակատից վերադարձող բազմաթիվ զորամասեր՝ հազարավոր զինվորներով, որոնք ռևոլյուցիոն ագիտացիայի մեծ օբեկտ էին հանդիսանում։

Պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդներ Լենինը և Ստալինը հատուկ ուշադրություն էին դարձնում զորքին սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղվող քաղաքական պայքարի մեջ ներգրավելու հարցին։ Լենինը

[1] Տես ՀամԿ(բ)Պ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, Ալավերդյանի ֆոնդ (№ 20), գործ 20, թ. 1։

բազմիցս ընդգծել է, որ «...եթե ռևոլյուցիան մասսայական չդառնա և իր կողմը չգրավի զորքը, ապա խոսք էլ չի կարող լինել լուրջ պայքարի մասին»։[1]

Ղեկավարվելով պրոլետարական ռևոլյուցիայի լենինյան-ստալինյան պլանով, իմպերիալիստական պատերազմի տարիներին բոլշևիկները լայն պայքար են ծավալում զինվորական մասսաներին պրոլետարիատի կողմը նվաճելու համար։ Այս պայքարին պարտիայի հանձնարարությամբ ակտիվ կերպով մասնակցում է նաև Ալավերդյանը։

Գալով Սարիղամիշ, Ալավերդյանն աշխատանքի է ընդունվում Քաղաքների միությունում՝ ավագ հսկիչի պաշտոնով։ Քաղաքների միությունն իր գործունեության բնույթով կապված էր և՛ բանակի և՛ քաղաքացիական բնակչության հետ, մի բան, որ քաղաքական-մասսայական աշխատանք ծավալելու լայն հնարավորություն էր ստեղծում։

Դեռևս ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին Սարիղամիշում հիմնվել էր ՌՍԴԲԿ կազմակերպություն՝ բոլշևիկյան թեքումով, որը 1905-1907 թվականներին ռևոլյուցիոն մեծ աշխատանք էր կատարում զինվորների և քաղաքի աշխատավորության մեջ։ Ռեակցիայի դաժան տարիներին, չդիմանալով ցարիզմի բազմաթիվ հարձակումներին, այդ կազմակերպությունը դադարում է գործելուց։ Սարիղամիշ գալով Ալավերդյանն անմիջապես ձեռնամուխ է լինում տեղի բոլշևիկյան կազմակերպության վերականգնման աշխատանքներին։ Նա կապվում է Սարիղամիշում գտնվող բոլշևիկների հետ և ստեղծում բոլշևիկյան խմբակ, որը դառնում է բանվորների, զորքի և քաղաքացիների մեջ տարվող ռևոլյուցիոն աշխատանքների կենտրոնը։ Այս խմբակի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ կազմակերպվում են մի շարք միտինգներ և ժողովներ, որոնք կարևոր դեր են կատարում տեղի բանվորների և զինվորների ռևոլյուցիոնականացման և նրանց բոլշևիկների շուրջը համախմբելու գործում։

1917 թ. փետրվարյան ռևոլյուցիան լայն ասպարեզ է բաց անում Ալավերդյանի ռևոլյուցիոն գործունեության համար։

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո ստեղծված նոր իրադրության պայմաններում բոլշևիկյան պարտիայի խնդիրն էր «...մասսաների մեջ համբերատար բացատրական աշխատանք կատարելով բացահայտել Ժամանակավոր կառավարության իմպերիալիստական բնույթը, մերկացնել էսեռների ու մենշևիկների դավաճանությունը և ցույց տալ, որ հաշտություն չի կարելի ձեռք բերել առանց Ժամանակավոր կառավարությունը Սովետների կառավարությամբ փոխարինելու»։[2]

Բոլշևիկների պարտիան ամբողջ եռանդով ձեռնամուխ է լինում այս աշխատանքներին։ Այս ուղղությամբ Սարիղամիշում լայն գործունեություն է ծավալում նաև բոլշևիկ Ալավերդյանը։

Զինված մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի ցուցումներով և պարտիայի ապրիլյան կոնֆերենցիայի ու 6-րդ համագումարի որոշումներով, Ալավերդյանը պրոպագանդիստական խոշոր աշխատանք է կատարում բուրժուական Ժամանակավոր կառավարության, նրա տեղական օրգանների,

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 11, էջ 203։
[2] Համ Կ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, 1950 թ., էջ 242։

դաշնակների, մենշևիկների, էսեռների և այլ կոնտրռևոլյուցիոն պարտիաների մերկացման ուղղությամբ։

Փետրվարյան ռևոլյուցիայից անմիջապես հետո, 1917 թ. մարտին, Ռուսաստանի մյուս քաղաքների օրինակով, Սարիղամիշում ևս ստեղծվում է բանվորների և զինվորների Սովետ։ Ալավերդյանը ղեկավար մասնակցություն է ունենում Սովետի կազմակերպման գործում։ Նա ընտրվում է Սովետի Գործադիր կոմիտեի կազմում և դառնում է նրա բոլշևիկյան ֆրակցիայի ղեկավարը։

Ապրիլի 22-ին, բոլշևիկյան մամուլի օրը, Ալավերդյանի ղեկավարությամբ Սարիղամիշի երկաթուղային կայարանում կազմակերպվում է բազմամարդ միտինգ, մասնակցությամբ երկաթուղային և այլ բանվորների։ Միտինգի նախագահ է ընտրվում Ալավերդյանը։ Այս մասին «Կավկազսկի Ռաբոչի» թերթը գրում է. «Ապրիլի 22-ին, մամուլի օրը, երեկոյան ժամը 9-ին, երկաթուղային կայարանում կարմիր դրոշակներով և թարմ ծաղիկներով զարդարված մի մեծ դահլիճում կազմակերպվեց միտինգ... Մասնակցում էին մոտ 200 մարդ, բացառապես բանվորներ, որոնք աշխատում էին տարբեր կազմակերպություններում և երկաթուղում։ Ժողովը նախագահ ընտրեց Ալավերդովին...»[1]

Միտինգում ունեցած իր ելույթում Ալավերդյանը մերկացնում է բուրժուական Ժամանակավոր կառավարության իմպերիալիստական քաղաքականությունը, հակաբոլշևիկյան պարտիաների դավաճանությունը և ցույց է տալիս այն վիթխարի նշանակությունը, որ ունի բոլշևիկյան մամուլը բանվոր դասակարգի համար։ Միտինգը որոշում է օգնել բանվորական մամուլը։ Կատարվում է հանգանակություն բանվորական մամուլի ֆոնդի օգտին։[2]

Ապրիլ, մայիս, հունիս ամիսներին Ալավերդյանի ղեկավարությամբ Սարիղամիշում տեղի են ունենում մի շարք բազմամարդ միտինգներ ու ժողովներ, ռուսերեն և տեղական լեզուներով գրվում և տարածվում են բազմաթիվ թռուցիկներ, որոնք մեծ դեր են կատարում մասսաների բոլշևիկացման գործում։

Հունիսի 29-ին Սարիղամիշում մի խումբ զինվորներ ռեակցիոն ուժերի դրդմամբ գազանային դատաստան են տեսնում շուկա եկած անզեն բանվորների հետ։ Նրանք տանջամահ են անում կշռորդ Բուրջանիձեին և գցում ագրի արկղը։ Պրովոկացիան սպառնում է լայն չափեր ընդունել։ Հունիսի 30-ին բանվորների և զինվորների դեպուտատների Սարիղամիշի Սովետի Գործադիր կոմիտեն Ալավերդյանի ղեկավարությամբ կայարանի հրապարակում մեծ միտինգ է կազմակերպում՝ մասնակցությամբ մի քանի հազար զինվորի և բանվորի։ Միտինգում ելույթ ունեցող ընկերները դատապարտում են կոնտրռևոլյուցիոն ուժերի պրովոկացիոն գործողությունները, ազգային թշնամություն հրահրելու նրանց փորձերը և բանակին ու պրոլետարիատին միասնության կոչ են անում։ Միտինգը միաձայն ընդունում է ռեզոլյուցիոն բանաձև, որը հույս է հայտնում, որ ռևոլյուցիոն ուժերի միասնությունը վերջ կդնի ամեն մի պրովոկացիայի։ Ալավերդյանը «Կավ-

---

[1] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 42։

[2] Նույն տեղում, №№ 34, 42։

կազսկի Ռաբոչի» թերթում տպագրված իր մի հոդվածում պատմելով այս դեպքերի մասին, դիմում է զինվորներին և բանվորներին կոչ անելով համատարիմ մնալ ռևոլյուցիայի գործին և՝ ի պատասխան կեղտոտ պրովոկացիաների, ուժեղացնել իրենց կազմակերպվածությունը։

«Ընկեր զինվորները պետք է իմանան,— գրում է Ալավերդյանը,— որ ռևոլյուցիայի բախտն իրենց ձեռքերում է, որ մութ պրովոկացիոն տարրերը նրանց կհրեն այդպիսի նողկալի գործերի... Ռևոլյուցիայի թշնամիները հոգևորքի մեջ ապրող ջղաձգություններ են անում, բայց նրանց մութ և լկտի գործերին ռևոլյուցիոն պրոլետարիատը և բանակը պետք է հակադրեն իրենց հզոր և համախմբված կազմակերպվածությունը։ Միայն այդ դեպքում ռևոլյուցիայի գործը կգտնվի հավատարիմ և հուսալի ձեռքերում»։[1]

Ալավերդյանն ամբողջ հոգով ատում էր դաշնակներին և պայքարում նրանց դեմ։ Դեռևս Մոսկվայի Առևտրական ինստիտուտում սովորելու ժամանակ, երբ նացիոնալիստական տարրերը կազմակերպում էին այսպես կոչված «հայկական», «վրացական» և այլ «հայրենակցություններ», Ալավերդյանը խիստ կերպով հանդես էր գալիս նրանց դեմ՝ ի պաշտպանություն պրոլետարական ինտերնացիոնալիզմի։ Սարիղամիշում աշխատելու ժամանակ Ալավերդյանը հատուկ զայրույթով ու կրքոտությամբ մերկացնում է դաշնակների կեղծ հայրենասիրությունը, դաշնակցական կամավորական շարժման ստոր նպատակները։

1917 թ. ամբողջ ընթացքում Սարիղամիշում գրեթե և ոչ մի միտինգ կամ ժողով չէր անցնում առանց Ալավերդյանի ղեկավար մասնակցության։ Ամեն օր նա մասսաների առաջ հանդես էր գալիս դասախոսություններով և ելույթներով։ ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան և Թիֆլիսի կոմիտեների օրգան «Կավկազսկի Ռաբոչի» թերթի լույս ընծայման առաջին իսկ օրերից (1917 թ. մարտ) Ալավերդյանը նրա հատուկ թղթակիցն էր և թերթի էջերում Ս. Ալավերդով, Ստարիյ Տրոֆիմ ստորագրություններով հրապարակում էր բազմաթիվ հոդվածներ, որոնցում պաշտպանում էր բոլշևիկյան գիծը ռևոլյուցիայի մեջ և մերկացնում հակաբոլշևիկյան պարտիաների կոնտրռևոլյուցիոն գործունեությունը։

Ա. Մռավյանը, խոսելով Սարիղամիշում Ալավերդյանի ռևոլյուցիոն գործունեության մասին, նրան անվանում է «իմպերիալիստական պատերազմի դեմ ծառացած զինվորների սիրելի հռետորը»։[2]

Որ հետևողական բոլշևիկյան դիրքի և անսպառ եռանդի շնորհիվ Ալավերդյանը դառնում է Սարիղամիշի բանվորների և զինվորական լայն շրջանների ճանաչված ու սիրված ղեկավարը։

Ալավերդյանի ղեկավարությամբ՝ Սարիղամիշի բոլշևիկների եռանդուն գործունեությունը շուտով տալիս է իր արդյունքները։ Սարիղամիշի կայազորն արագորեն բոլշևիկանում է։ Ղարսի հրետանային պահեստի, 151 էվակուացիոն պունկտի և այլ զորամասերի հազարավոր զինվորներ ամբողջովին գնում են բոլշևիկների հետևից։ 1917 թվականի սեպտեմբերին Սարիղամիշի բոլշևիկյան կազմակերպության անդամների թիվը անցնում է 300-ից։

[1] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 95 (հուլիսի 9)։
[2] «Խորհրդային Հայաստան», 1921 թ., № 104։

1917 թ. հոկտեմբերի 6-ին 151 էվակուացիոն կետում հրավիրվում է բոլշևիկների, էսեռների և մենշևիկների ընդհանուր ժողով՝ պարտիայի ծրագրի և ընթացիկ մոմենտի հետ կապված մի քանի հարցերի պարզաբանման համար։ Մենշևիկները, վախենալով պարտությունից, չեն ներկայանում ժողովի։ Ժողովին մասնակցում են բոլշևիկների ու էսեռների ներկայացուցիչները և 300 զինվոր։ Ժողովում ընթացիկ մոմենտի մասին զեկուցումով հանդես են գալիս մի բոլշևիկ և մի էսեռ, որից հետո սկսվում են վիճաբանությունները։ Ելույթ ունեցող զինվորները միահամուռ կերպով պաշտպանում են բոլշևիկներին և մերկացնում էսեռների դավաճանական քաղաքականությունը։ Տեսնելով իրենց պարտությունը, էսեռները դիմում են պրովոկացիայի իրենց սիրած մեթոդներին։ Նրանք փորձում են վարկաբեկել բոլշևիկներին, բայց ոչ մի արդյունքի չեն հասնում։ Ժողովը միաձայն ընդունում է բոլշևիկյան բանաձև և որոշում է այն ուղարկել բոլշևիկների Երկրային կոմիտեին։

«Կավկազսկի Ռաբոչի» թերթում գրելով այս ժողովի մասին, Ալավերդյանն այն գիտում է որպես բոլշևիկների տրիումֆ, որովհետև 151 էվակուացիոն կետը, որը մինչ այդ համարվում էր Սարիղամիշի էսեռների գլխավոր միջնաբերդը, ժողովից հետո ամբողջովին դառնում է բոլշևիկյան[1]։

1917 թ. հոկտեմբերի 2–7-ը Թիֆլիսում Լենինի և Ստալինի ցուցումներով և Ստեփան Շահումյանի անմիջական ղեկավարությամբ տեղի ունեցած Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը, նշելով Սարիղամիշի բոլշևիկների հաջողությունը, արձանագրում է, որ քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ մեծամասնությունը բոլշևիկներն են և Սովետի առաջիկա վերընտրությունների ավելի շատ ձայն կտան բոլշևիկներին։

Համագումարը Լենինի և Ստալինի ցուցումների համապատասխան Անդրկովկասի բոլշևիկների առաջ խնդիր է դնում՝ բանվորներին, զինվորներին և գյուղացիներին զինված պայքարի հանել սովետական իշխանության համար։

Ղեկավարվելով Կովկասյան համագումարի որոշումներով, Սարիղամիշի բոլշևիկները նոր թափ են հաղորդում ռևոլյուցիոն աշխատանքներին։ Հոկտեմբերի կեսերին նրանք պաշտոնապես դուրս են գալիս միացյալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունից և Սարիղամիշում ստեղծում են բոլշևիկյան կոմիտե՝ Ալավերդյանի նախագահությամբ։

1917 թ. հոկտեմբերի 25-ին Պետրոգրադում հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որի հետևանքով հաստատվեց սովետական իշխանություն։ Ռևոլյուցիայի հաղթանակը աննախընթաց խթան հանդիսացավ մասսաների բոլշևիկացման համար։

«Հոկտեմբերյան ռևոլյուցիան սուր կերպով փոխեց դրությունը,—գրում է ընկեր Ստալինը։—Նա մեկ շարժումով տակնուվրա արեց բոլոր հարաբերությունները, դնելով իշխանությունը աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Ամբողջ իշխանությունը բանվորներին ու գյուղացի-

---

[1] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 197 (Նոյեմբերի 11)։

ներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներին...»[1]

Սոցիալիստական ռևոլյուցիայի լուրը արագորեն հասավ նաև Սարիղամիշ՝ բանվորների և զինվորների մեջ առաջացնելով բուռն խանդավառություն և մեծ հրճվանք։

Ռևոլյուցիայի հաղթանակի լուրն իմանալուց անմիջապես հետո, բոլշևիկների ղեկավարությամբ Սարիղամիշում կազմակերպվում են բանվորների և զինվորների բազմամարդ միտինգներ և ժողովներ, որոնց մասնակիցներն իրենց անհողդողդ կամքն են արտահայտում կրծքով պաշտպանելու ռևոլյուցիայի նվաճումները։

Ալավերդյանը եղել է այս միտինգների ակտիվ կազմակերպիչն ու մասնակիցը։ Այս ժամանակաշրջանում նա բազմիցս հանդես է գալիս դասախոսություններով ու զեկուցումներով, գրում է մի շարք հոդվածներ, բանաձևեր ու կոչեր, որոնց մեջ պարզաբանում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի վիթխարի համաշխարհային պատմական նշանակությունը, մերկացնում անգլո-ամերիկյան իմպերիալիստներին, ռևոլյուցիայի թշնամի էսեռներին ու մենշևիկներին, անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոներներին, որոնք ձգտում էին Անդրկովկասը կտրել ռևոլյուցիոն Ռուսաստանից և այն հենարան դարձնել ռևոլյուցիայի դեմ պայքարելու համար։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից անմիջապես հետո «Կավկազսկի Ռաբոչի» թերթում տպագրված «Անդրկովկասն ինքնորոշվեց» հոդվածում Ալավերդյանն ամբողջ սրտով ողջունում է ռևոլյուցիայի հաղթանակը և կոչ է անում պաշտպանել նրա նվաճումները։

«Կատարվեց։ — Գրում է Ալավերդյանը։ — Մենք կանգնած ենք համաշխարհային կարևորություն ունեցող պատմական փաստի առաջ, մի փաստի, որի նմանը չի հիշում մարդկության պատմությունը։

Մեր մեծ ուսուցչի մեծ նշանաբանը՝ «բանվորների ազատագրումը հենց իրենց բանվորների գործն է», վերջապես դարձավ ներկայիս պրակտիկ նշանաբանը ռուսական պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության համար։

Եվ ահա, 1917 թվականի հոկտեմբերի 25-ի պատմական օրը, ռուսական ռևոլյուցիոն դեմոկրատիան, կատարելով բանվորագյուղացիական ռևոլյուցիա, դուրս կորզեց իր բախտը, իր դասակարգային, դարավոր թշնամի կապիտալիստների և կալվածատերերի ու նրանց պոչուկներ ռևոլյուցիան հանգցնողներ՝ պաշտպանողականների ձեռքերից և ինքը վերցրեց կոփելու իր բախտը, իր վիճակը»։[2]

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ազդեցությամբ և բոլշևիկների ակտիվ գործունեության հետևանքով Սարիղամիշի կայազորն արագորեն բոլշևիկանում է։ Բոլշևիկյան կազմակերպության անդամների թիվը նոյեմբերի կեսերին հասնում է 1500-ի[3]. Այս մասին տագնապով արձանագրում են Կովկասյան զինվորական օկրուգի ամփոփագրերը։[4]

1917 թ. նոյեմբերին ամեն օր Սարիղամիշում տեղի են ունենում

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 60։
[2] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 202։
[3] Նույն տեղում, 1917 թ., № 208։
[4] Տես История гражданской войны в СССР, том 2, 1947 г., стр. 488.

բազմաթիվ միտինգներ ու ժողովներ, որտեղ ընդունված որոշումներն ու բանաձևերը վկայում են բոլշևիկների պարտիայի և Սովետական կառավարության նկատմամբ բանվորների ու զինվորների մեջ աճող սիրո և համակրանքի մասին։

Նոյեմբերի 10-ին Սարիղամիշի հրետանային պահեստի զինվորների ժողովը՝ այլ զորամասերի ներկայացուցիչների մասնակցությամբ լսելով բոլշևիկ հռետորի ճառը ընթացիկ մոմենտի մասին, որոշում է ողջունել «...Պետրոգրադի և Մոսկվայի կայազորներին ու բանվորներին, ինչպես նաև կրոնշտադտցիներին ու հերոսական Բալթիական նավատորմին՝ ռևոլյուցիոն ելույթների և կոնտրռևոլյուցիոն կալվածատիրական բուրժուական կառավարությունը տապալելու համար»։[1]

Նոյեմբերի 30-ին Սարիղամիշի կայազորի կազակային զորամասերի և 18-րդ Կովկասյան հրաձգային գնդի զինվորները ռևոլյուցիոն բանաձև են ընդունում, որտեղ ասված է՝ «...Ճանաչել Կովկասյան Երկրային Սովետը, այլ ենթարկվել միայն Լենինին»։[2]

Սարիղամիշում բոլշևիզմի ազդեցության արագ աճը ցայտուն կերպով երևաց Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ՝ 1917 թ. նոյեմբերին։ Չնայած կոնտրռևոլյուցիոն պարտիաների ստոր մեքենայություններին, ընտրություններին մասնակցած բանվորների և զինվորների մեծամասնությունը ձայն տվեց բոլշևիկների օգտին։

Ամփոփելով Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքները Սարիղամիշում, «Կավկազսկի Ռաբոչի» թերթում գրած հոդվածում Ալավերդյանը ցույց է տալիս բանվորական և գյուղացիական մասսաների մեջ բոլշևիկների աճող ազդեցությունը և անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գործակալներ՝ էսեռների ու մենշևիկների խայտառակ պարտությունը։ Ալավերդյանը գրում է. «Տեղական էսեռները բառացիորեն հեղեղել էին Սարիղամիշը տարբեր տեսակի կոչերով և պլակատներով, բայց այնուամենայնիվ նրանց «հող և ազատությունը» ամբողջովին խամրեց ուժ ռևոլյուցիոն ամիսների ընթացքում։

Նրանց հանցագործ համաձայնողական քաղաքականությունը այդ ամիսներին «փայլուն» արդյունքներ տվեց իրենց։ Մենք ստացանք 6211 ձայն, որոնցից 1500 ընկերներ մեր Սարիղամիշի կազմակերպության անդամ են։ ...Սարիղամիշի էսեռները պետք է խորապես մտածեն, որ գյուղացիական մասսան, որը միամտորեն գնում էր նրանց ոչինչ չասող «հող և ազատություն» լոզունգի հետևից, մեջք է դարձրել էսեռներին։ Նա գնում է այն պարտիայի հետևից, որը գործով և ոչ թե խոսքով տալիս է և՛ հող և՛ ազատություն։ Նա երես է դարձրել նրանցից, ովքեր հաշտության փոխարեն նրանց տվին հունիսի 18-ի հարձակումը՝ ի հաճույս անգլո-ամերիկյան բուրժուազիայի։ Նա երես է դարձրել նրանցից, ովքեր արտադրության և բաշխման վրա վերահսկողություն սահմանելու փոխարեն՝ տվել են սրտառուչ բլոկ կիշկիններ, բուրիշկինների հետ։ Նա երես է դարձրել նրանցից, ովքեր Պետրոգրադի կայազորին և պրոլետարիատին՝ բուրժուազիայի և կալվածատերերի դեմ նրա մղած հերոսական պայքարում պաշտ-

[1] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 203։
[2] ЦГАОР Груз. ССР, ф. 1, д. 3543, л. 17.

պանելու փոխարեն, նրանց դեմ են ուղղել կոնտրռևոլյուցիոն յունկերներին: Մասսան սթափվել է: Նա գնում է դեպի շահագործումից լիակատար ազատագրումը, դեպի սոցիալիզմ: Նա գնում է այդ նպատակը տանող պարտիայի հետևից, ռևոլյուցիոն պրոլետարիատի և գյուղական չքավորության պարտիայի հետևից: Սարիղամիշի ընտրությունները հիշեցնում են այն առածը, թե ինչ ցանես, այն էլ կհնձես: Բոլշևիկների հետ եղբայրանալը պետք է հանգեցներ դրան»:[1]

Անդրկովկասի ռեակցիոն ուժերը սվիններով դիմավորեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան: Նրանք ակնրախ տեսան,—գրում է ընկեր Ստալինը,— որ «Հոկտեմբերյան Ռևոլյուցիան և Սովետական իշխանությունը անխուսափելի մահ են բերում նրանց: Պայքարը Սովետական իշխանության դեմ, այդ պատճառով էլ, դարձավ նրանց համար կյանքի ու մահվան հարց...»:[2]

1917 թ. նոյեմբերի 15-ին վրացական մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների գլխավորությամբ ստեղծվում է Անդրկովկասյան կոմիսարիատ, իսկ 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան սեյմը, որոնք վրացական, հայկական և ադրբեջանական «ազգային խորհուրդների» հետ միասին, կոնտրռևոլյուցիոն բլոկ են կազմում ընդդեմ բանվորների և աշխատավոր գյուղացիության, անջատում են Անդրկովկասը ռևոլյուցիոն Ռուսաստանից և որպես օտարերկրյա իմպերիալիստների գործակալներ, հանդես են գալիս ռևոլյուցիայի դեմ:

Անդրկովկասի բոլշևիկները հենց սկզբից հերոսական պայքար են ծավալում Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն բլոկի դեմ:

Այս պայքարին ակտիվ մասնակցություն է ունենում Սարիղամիշի բոլշևիկյան կազմակերպությունը, որի ղեկավարը Ալավերդյանն էր:

Անդրկովկասյան կոմիսարիատի նկատմամբ Սարիղամիշի զինվորների ունեցած վերաբերմունքի հարցը քննելու համար 1917 թ. նոյեմբերի 24-ին հրավիրվում է Սարիղամիշի շրջանի զինվորական դեպուտատների Սովետի ընդհանուր ժողով: Այս հարցի քննարկումը առաջացնում է բուռն վիճաբանություններ: Էսէռները մի բանաձև են ներկայացնում, որը ողջունում է Անդրկովկասյան կոմիսարիատի կազմակերպումը և առաջարկում է ճանաչել այն որպես միակ իշխանություն: Բոլշևիկներն առաջարկում են որպես միակ իշխանություն ճանաչել Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետը: Քվեարկության ժամանակ ձայների ճնշող մեծամասնությամբ անցնում է բոլշևիկյան բանաձևը:[3]

«Կավկազսկի Ռաբոչի» թերթում գրելով այս ժողովի մասին, Ալավերդյանը մերկացնում է էսէռների կոնտրռևոլյուցիոն մեքենայությունները, անվանելով նրանց ոզնիկներ, որոնք «իրենց գլուխները թաքցնում են հարձակվող ռևոլյուցիոն դեմոկրատիայից»:[4]

Կարևոր նշանակություն տալով Սարիղամիշի շրջանի զինվորական դեպուտատների Սովետի վերոհիշյալ ժողովին, բոլշևիկյան «Պրավդա» թերթը տպագրում է Ալավերդյանի հոդվածն այդ մասին, որտեղ ասված է՝ «Նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ Սարիղամիշի շրջանի գյուղացիական (զին-

[1] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 208 (նոյեմբերի 25):
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 60:
[3] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 215:
[4] Նույն տեղում:

վորական) դեպուտատների Սովետի ընդհանուր ժողովը։ Օրակարգում դրված էր Սովետի վերաբերմունքի հարցը նոր կազմակերպված Անդրկովկասյան «մինիստրությանը» (կոմիսարիատի) նկատմամբ։ Այդ հարցն առաջացրեց բուռն վիճաբանություններ։

Նախագահ Դավթյանը (էսեռ-պաշտպանողական) առաջարկում է մի բանաձև, որը ողջունում է Անդրկովկասյան կոմիսարիատը և այն ճանաչում է որպես միակ իշխանությունը։ Ընկ. ընկ. բոլշևիկները առաջարկում են բանաձև, որը որպես միակ իշխանությունը ճանաչում է Պետրոգրադում գտնվող Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետը և մերժում է բանվորների և զինվորների դեպուտատների Սովետի 2-րդ համագումարի կողմից չբխող ամեն մի այլ իշխանություն։

Ավեարկության ժամանակ ճնշող մեծամասնությամբ անցնում է բոլշևիկների բանաձևը»։[1]

1917 թվականի նոյեմբեր ամսին Անդրկովկասյան կոմիսարիատի դեմ՝ ի պաշտպանություն Սովետական կառավարության, որոշումներ են ընդունում Սարիղամիշում գտնված 156-րդ Ելիզավետապոլյան գնդի ոչ շարային վաշտի, առաջավոր հրետանային պահեստի, կազակական զորամասերի 5-րդ ավտովաշտի, № 2-րդ պարենային պահեստի և այլ զորամասերի զինվորները։

«Ընկեր զինվորներ, բանվորներ, բոլոր գյուղացիական պրոլետարներ,— ասված է այդ որոշումներից մեկում։— Բոլոր ուժերով և միջոցներով պաշտպանեցեք ստեղծված մեր ժողովրդական կառավարությունը։ Պահանջեցեք հեռացնել բոլոր կոնտրռևոլյուցիոն պետերին։ Ինքներդ ընտրեցեք ձեզ համար ղեկավարներ և պետեր՝ իսկական հավատարիմ ժողովրդական աշխատողներին։

Կեցցե բանվորա-գյուղացիական կառավարությունը, սոցիալական ռևոլյուցիան և մեր անխոնջ, տաղանդավոր առաջնորդ Լենինը»։[2]

1917 թ. դեկտեմբերին «Կավկազսկի Ռաբոչի» թերթում լույս տեսած իր մի շարք հոդվածներում Ալավերդյանը պատմում է Սարիղամիշի կայազորի բոլշևիկացման մասին և ցույց է տալիս, որ էսեռների ու մենշևիկների կործանումն ու բոլշևիկների հաղթանակն անխուսափելի է։

Դեկտեմբերի 5-ին տեղի է ունենում Սարիղամիշի կայազորի դելեգատների ժողով՝ Կովկասյան բանակի երկրային 2-րդ համագումարին դելեգատներ ընտրելու համար։ Էսեռները և նրանց հետևից քարշ եկող մենշևիկները ժողովում խայտառակ պարտություն կրելով հրաժարվում են ընտրություններին մասնակցելուց։ Համագումարի դելեգատներ են ընտրվում միայն բոլշևիկներ՝ 7 հոգի և մեկ ձախ էսեռ, որը հարում էր բոլշևիկներին։ Դելեգատներին տրվում է միաձայն ընդունված նակազ, որը գրել էր Ալավերդյանը։

«Կավկազսկի Ռաբոչի» թերթում տպագրված «Նամակ Սարիղամիշից» հոդվածում գրելով վերոհիշյալ ժողովի մասին և բերելով նակազի ամբողջ տեքստը, Ալավերդյանը դեկտեմբերի 5-ը (ժողովի օրը) Սարիղամիշում համարում է պատմական օր։

«Այդ օրը,— գրում է Ալավերդյանը,— Սարիղամիշի կայազորը վերջնականապես և ընդմիշտ վերջ դրեց, սահմանազատվեց էսեռ պաշտպանողա-

[1] „Правда", вечерный выпуск, 1917 г., № 42
[2] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 212 (նոյեմբերի 30)։

կաններից, որոնք 8 ամիս չարաչար խաբում էին նրանց, 8 ամիս բանաձևերում խոստանալով նրանց ամեն բարիք, փաստորեն պաշտպանում էին կերենսկիներին, սավինկովներին, դոնսկիններին և նրանց համախոհներին»։[1]

«Կավկազսկի Ռաբոչի» թերթում տպագրված մի այլ հոդվածում՝ «Դեղին հեռագրեր» վերնագրով, Ալավերդյանը մերկացնում է անդրկովկասյան ռեակցիայի՝ բոլշևիկների դեմ ուղղված հերթական պրովոկացիաներից մեկը և ցույց է տալիս, որ կոնտրռևոլյուցիոն ուժերը դատապարտված են մահվան։

«...Երկրային Գործադիր կոմիտեի և տխրահռչակ անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքացիները կորցրել են ամեն տեսակի ոչ միայն ռևոլյուցիոն, այլև քաղքենիական խիղճը,—գրում է Ալավերդյանը,—զգալով իրենց քաղաքական վախճանի մոտիկությունը, նրանք աշնան ճանճերի նման սկսել են ուժեղ կերպով կծել, կանգ չառնելով և ոչ մի ստորության առաջ։

Ոչ, կանաչ ճահճի գործեր, ձեզ այլևս չի հաջողվի խաբել ժողովրդին»։[2]

Ալավերդյանը հոդվածում ընդգծում է, որ ամբողջ կայազորը դատապարտում է պրովոկատորներին։

1917 թ. «Կավկազսկի Ռաբոչի» թերթում տպագրված Ալավերդյանի բազմաթիվ հոդվածները կարևոր դեր խաղացին կովկասյան ռազմաճակատի զինվորների ռևոլյուցիոնականացման գործում։ Նրանք առանձնակի նշանակություն ունեցան Սարիղամիշի կայազորի զինվորների համար, որոնք սիրով ու մեծ հետաքրքրությամբ էին կարդում իրենց կողմից լավ ճանաչված բոլշևիկ գործչի յուրաքանչյուր հոդվածը։

1917—1918 թթ. ձմռանը Սարիղամիշը դառնում է Անդրկովկասի ամենառևոլյուցիոն կենտրոններից մեկը։ Ոգևորված Սովետական Ռուսաստանի հաջողություններով, և հետևելով Բաքվի հերոսական պրոլետարիատի օրինակին, Սարիղամիշի բանվորներն ու զինվորները բոլշևիկների ղեկավարությամբ զինված պայքարի են դուրս գալիս հանուն սովետական իշխանության։ 1918 թվի հունվարին Սարիղամիշում կազմակերպվում է Ռազմառևոլյուցիոն կոմիտե, որն իրեն ձեռքն է վերցնում տեղի ամբողջ իշխանությունը։ Քաղաքի կայազորը հայտարարվում է Սովետական ռևոլյուցիոն բանակ և դրվում է ժողովրդական կոմիսարների Սովետի տրամադրության տակ։ Ռազմառևոլյուցիոն կոմիտեն չեղյալ է հայտարարում Անդրկովկասյան կոմիսարիատի դեկրետները, ցրում է տեղական իշխանության օրգանները, նշանակում է կոմիսարներ և փորձում է ընդարձակել իր իշխանության սահմանները։ Ուժեր են կուտակվում Ղարսի, Էրզրումի և անհրաժեշտության դեպքում նաև Թիֆլիսի վրա շարժվելու համար։[3]

Այս մարտական օրերին Ալավերդյանը հանդես է գալիս որպես Սարիղամիշում սովետական իշխանության ակտիվ կազմակերպիչներից մեկը։ Նա ընտրվում է Սարիղամիշի Ռազմառևոլյուցիոն կոմիտեի անդամ։[4]

Այսպիսով՝ 1917 թվականին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման և իրագործման ժամանակաշրջանում պար-

---

[1] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 219 (նոյեմբերի 30)։

[2] «Կավկազսկի Ռաբոչի», 1917 թ., № 226 (դեկտ. 21)։

[3] Տես ЦГИА Груз. ССР, ф. 3, т. 4, д. 14.

[4] ՀամԿ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 20, գ. 20, թ. 1։

տիայի կամքով հաստատվելով Սարիղամիշում, Ալավերդյանը որպես անձնըվեր բոլշևիկ-ռևոլյուցիոներ, անսպառ եռանդի տեր շնորհալի կազմակերպիչ, և կրթված լենինյան, խոշոր դեր է կատարում մասսաներին բոլշևիկյան լոզունգների շուրջը համախմբելու և նրանց սովետական իշխանության համար պայքարի հանելու ուղղությամբ։

Իր ռևոլյուցիոն գործունեության ընթացքում Ալավերդյանը միշտ ղեկավարվում էր Լենինի և Ստալինի ցուցումներով։ Նա ուսումնասիրում և պրոպագանդա էր անում Լենինի և Ստալինի յուրաքանչյուր հոդված, գրքույկ և ելույթ։ Ալավերդյանը Ռուսաստանում սովետական իշխանության և Լենինի ու Ստալինի ղեկավարած սովետական կառավարության առաջին ողջունողներից և անձնվեր պաշտպաններից էր։

Ալավերդյանի պրակտիկ ու գաղափարական աճի գործում խոշոր նշանակություն ունեցան նրա անձնական նամակագրական կապերը Կովկասում աշխատող ղեկավար բոլշևիկների և մասնավորապես Ս. Շահումյանի ու Ա. Միկոյանի հետ, որոնցից նա դիրեկտիվներ և խորհուրդներ էր ստանում։

Ալավերդյանը սերտ կապերի մեջ էր նաև Ալեքսանդրապոլի, Ղարսի, և Հայաստանի այլ շրջանների բոլշևիկյան կազմակերպությունների ու նրանց ղեկավարներ՝ Գ. Արվելաձեի, Հ. Սարուխանյանի, Ի. Ղարիբջանյանի և ուրիշների հետ։ Այս կապերը հետագայում օգտագործվեցին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների միավորման համար։

Ալավերդյանի ռևոլյուցիոն աշխատանքը Սարիղամիշում խոշոր նշանակություն ունեցավ տեղի բոլշևիկյան կազմակերպության ամրապնդման գործում։ 1918—1920 թթ. Հայաստանում դաշնակների իշխանության մղձավանջային օրերին Սարիղամիշի բոլշևիկյան կազմակերպությունը կարևոր դեր խաղաց Հայաստանում Սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարում։ 1920 թ. մայիսյան ապստամբության հերոսական օրերին Սարիղամիշի բոլշևիկները քաղաքի ռևոլյուցիոն մասսաների գլուխ անցած, գնում էին ապստամբների առաջավոր շարքերում։

* * *

1918 թ. գարնանը զինվորական վերջին էշելոնների հետ միասին Ալավերդյանը թողնում է Սարիղամիշը և Կովկասյան Երկրային կոմիտեի որոշմամբ հաստատվում է Թիֆլիսում։ Այստեղ նա աշխատանքի է անցնում Թիֆլիսի քաղաքային ինքնավարությունում՝ վերահսկչի պաշտոնով։

1918 թ. մայիսին Անդրկովկասյան սեյմի լիկվիդացիայից հետո օտարերկրյա իմպերիալիստների հովանավորությամբ Վրաստանում իշխանությունն անցնում է մենշևիկներին, Ադրբեջանում՝ մուսավաթականներին, իսկ Հայաստանում՝ դաշնակներին, որոնք գործելով անգլո-ամերիկյան իմպերիալիստների թելադրանքով, Անդրկովկասը վերածում են Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու պլացդարմի։ Այս ժամանակաշրջանում Անդրկովկասի բոլշևիկների առաջ խնդիր էր ծառացած՝ մերկացնել Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներներին, և մասսաներին պայքարի հանել հանուն սովետական իշխանության։

Ալավերդյանն ամբողջովին նվիրվում է այս աշխատանքներին։ Նա մըտ-

նում է ՌՍԴԲ(բ)Պ Թիֆլիսի կոմիտեի մեջ[1] և որպես ղեկավար բոլշևիկ բազմաթիվ ելույթներ է ունենում մենշևիկների ռեակցիոն քաղաքականության դեմ՝ մերկացնելով նրանց որպես օտարերկրյա իմպերիալիստների սոցիալիստական սքեմ հագած ծառաների, որոնք խաբում են ժողովրդին ազատության մասին աղաղակներով։

1918 թ. հուլիսի վերջին մենշևիկյան կառավարությունն Ալավերդյանին ձերբակալում է և բանտարկում Մետեխի բանտում։ Այստեղ ևս Ալավերդյանը չի դադարեցնում իր ռևոլյուցիոն աշխատանքը։ Ի պատասխան մենշևիկյան կառավարության կամայականությունների և բանտային բարբարոսական ռեժիմի, Մետեխի բանտում բանտարկված բոլշևիկները, այդ թվում նաև Ալավերդյանը, 1918 թ. հոկտեմբերի 23-ին հացադուլ են հայտարարում և 9 օր հրաժարվում են սնունդ ընդունելուց։[2] Թիֆլիսի բանվորները պահանջում են բանտից ազատել բոլշևիկներին։ Վախեցած մենշևիկյան կառավարությունը Ալավերդյանին և մյուս բոլշևիկներին ազատում է։ Ալավերդյանն արտաքսվում է Վրաստանից։ ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեի որոշմամբ 1918 թ. աշնանը նա գալիս է Հայաստան և ամբողջովին նվիրվում տեղի բոլշևիկյան կազմակերպությունների վերականգնման, ամրապնդման և միավորման աշխատանքներին։ Ալավերդյանն առանձնապես մեծ աշխատանք է ծավալում Երևանի բոլշևիկյան կազմակերպության ձևավորման և ամրապնդման ուղղությամբ։ Այստեղ նա ղեկավարում է դաբաղի կոմբջիջը, որը քաղաքի բոլշևիկյան աշխատանքների կենտրոնն էր։

«Հին կուսակցական Ալավերդյանն աշխատել է Հայաստանում սկսած 1918 թ. աշունքից և մեծապես նպաստել՝ մասնավորապես Երևանի կազմակերպության հիմնավորմանը և ամրացմանը» — գրում է Ա. Մռավյանը[3]

1919 թ. ընթացքում Ալավերդյանը լինում է Հայաստանի մի շարք շրջաններում (Իգդիր, Սարիղամիշ, Ղուրդուղուլի և այլն), մոտիկից ծանոթանում է պարտիական կազմակերպությունների վիճակի հետ, և խոշոր օգնություն է ցույց տալիս տեղերում անլեգալ պարտիական աշխատանքների կազմակերպման գործում։

1919 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցած Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների անլեգալ խորհրդակցությունում Ալավերդյանն ընտրվում է ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի (Արմենկոմ) անդամ և սերտ կապ պահպանելով ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեի ու Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեի հետ, ղեկավարում է պարտիական կազմակերպությունների գործունեությունն ու աշխատավոր մասսաների պայքարը Սովետական իշխանության համար։

Դաշնակներին, մենշևիկներին և նրանց օտարերկրյա տերեր՝ ամերիկաանգլիական իմպերիալիստներին մերկացնելու ու Հայաստանի աշխատավորությանը սովետական իշխանության համար պայքարի հանելու գործում առանձնապես կարևոր նշանակություն ունեցան Ալավերդյանի նշանավոր ելույթները Երևանում 1920 թ. հունվարի 6-ին և մայիսի 1-ին։

«Ընկ. Ալավերդյանի ճառը... մեծ տպավորություն թողեց հասարա-

---

[1] Տես «Խորհրդային Հայաստան», 1921 թ., № 104։

[2] Նույն տեղում։

[3] Ա. Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, Երևան, 1930 թ., էջ 21։

կության վրա»—գրում է «Պահակ» թերթը Ալավերդյանի հունվարի 6-ի ելույթի մասին[1]։

1920 թ. մայիսի 1-ին՝ բանվորների միջազգային տոնի օրը, բոլշևիկները Երևանում և Հայաստանի մի շարք այլ շրջաններում կազմակերպում են բազմամարդ միտինգներ։ Վտանգի ենթարկելով իր կյանքը, միտինգում կրակոտ ճառ է արտասանում Ալավերդյանը։ Ողջունելով Սովետական Ադրբեջանի աշխատավորությանը, նա կոչ է անում հետևել եղբայրական ժողովրդի օրինակին և Հայաստանում ևս հաստատել Սովետական կարգեր։

Ալավերդյանն իր ելույթում դաշնակներին անվանում է թալանչիներ և ավազակներ, որոնք հայ ժողովրդին հասցրել են ֆիզիկական բնաջնջման դուռը։

Մայիսմեկյան ցույցերից հետո, Ալավերդյանը խոր ընդհատակից շարունակում է ղեկավարել Հայաստանի պարտիական կազմակերպությունների աշխատանքները, ինֆորմացիաներ է գրում Թիֆլիս՝ Բոլշևիկների Կովկասյան Երկրային կոմիտեին՝ տեղեկացնելով Հայաստանում տիրող դրության մասին։

1920 թ. մայիսյան ապստամբության օրերին բոլշևիկների դեմ գազանային հարձակման անցած դաշնակները ձերբակալում են նաև Ալավերդյանին և բանտարկում Երևանի բանտում։

Ռուսաստանի Սովետական կառավարությունը և Ադրբեջանի բոլշևիկները, իմանալով դաշնակների բարբարոսությունների մասին, բազմիցս պահանջում են դադարեցնել գնդակահարությունները և Ալավերդյանին ու մյուս բոլշևիկներին ազատել բանտից, սակայն դաշնակ խմբապետները շարունակում են իրենց դաժան հաշվեհարդարը։ 1920 թվականի օգոստոսի 14-ի լույս 15-ի գիշերը, նրանք գաղտնի կերպով հանում են բանտից Ալավերդյանին և նրա մարտական ընկերներ, խիզախ բոլշևիկներ Ի. Ղարիբջանյանին և Ս. Մուսայելյանին ու Երևանից Քանաքեռ տանող ճանապարհի վրա գազանաբար գնդակահարում։ Բանտից գնդակահարության տարվելիս, դիմելով բանտի իր ռևոլյուցիոներ ընկերներին, որոնք չէին ուզում Ալավերդյանին դաշնակների հաշվեհարդարին հանձնել, Ալավերդյանն ասում է. «Ընկերներ, ես իսկապես համոզվեցի, որ դուք իրոք որոշել եք մեռնել ինձ համար։ Հենց միայն այդքանն էլ ինձ բավական է։ Այժմ ես հանգիստ սրտով կարող եմ մեռնելու գնալ, համոզված լինելով, որ ռևոլյուցիայի գործը կապրի։ Նա անձնվեր կոմունիստ ընկերների հուսալի ձեռքերում է գտնվում։ Այդ գիտակցությունն ահա ավյուն է ներշնչում ինձ ու թևեր տալիս»։ Եվ դառնալով դեպի դաշնակցական դահիճները, ասում է. «Լավ հիշեցեք, ռևոլյուցիայի գործը չի մեռնի։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տեր կդառնան իշխանությանը։ Իսկ դուք իմացած եղեք, որ իմ թափվելիք արյան յուրաքանչյուր կաթիլի համար կպատասխանեք ձեր հարյուրավոր համախոհների կյանքերով։ Մի կարծեք, որ ձեր չարագործությունը թաքուն կմնա։ Ինձ ճանաչում է Մոսկվան, ինձ ճանաչում է Բաքուն և այն ընկերները, որոնց հետ աշխատել եմ, վրեժխնդիր կլինեն իմ մահվան հա-

---

[1] «Պահակ», 1920 թ., № 14։

մար։ Կեցցե Հայաստանի կոմունիստական պարտիան։ Մնաք բարով ընկերներ»։[1]

Մայիսյան հերոսական ապստամբությունն արյան մեջ խեղդելով և նրա մասնակիցների հետ դաժան դատաստան տեսնելով, դաշնակ խմբապետները չէին կարող շեղել պատմության ընթացքը։ Հայ ժողովրդի համար կրիտիկական օրերին նրան օգնության են հասնում Լենինն ու Ստալինը։ Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվում են Սովետական կարգեր։ «...Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն» (Ստալին)։

Ալավերդյանը իր ամբողջ գիտակից կյանքը նվիրեց Լենինի—Ստալինի փառապանծ պարտիայի մեծ գործին, սովետական իշխանության գաղափարին։ Նա հաստատ համոզված էր, որ բոլշևիկների ղեկավարությամբ Հայաստանի բանվորները և գյուղացիները, կտապալեն դաշնակների տիրապետությունը և Հայաստանում կհաստատեն Սովետական կարգեր։ Ալավերդյանը պատկանում է հայ ժողովրդի այն խիզախ զավակների թվին, որոնց մասին Վ. Մ. Մոլոտովն ասել է. «...Հայ ժողովրդի ոչ քիչ ռևոլյուցիոն մարտիկներ իրենց կյանքը զոհաբերեցին, իրենց գլուխը տվին, որպեսզի ազգային ազատ, երջանիկ կյանք ձեռք բերեն իրենց ժողովրդի համար»։[2]

Ստեփան Ալավերդյանի ռևոլյուցիոն գործունեության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի աշխատավորության կոմունիստական դաստիարակության համար։

Г. Б. Гарибджанян

## О революционной деятельности большевика С. Алавердяна в Сарыкамыше, в 1917 г.

### Резюме

Степан Алавердян (1889—1920) был одним из выдающихся деятелей коммунистической партии (большевиков) Армении. Он принадлежал к числу тех большевиков-подпольщиков, профессиональных революционеров ленинско-сталинской школы, которые самоотверженно боролись за победу Великой Октябрьской социалистической революции и установление советской власти в Армении.

В исторической литературе почти не освещена революционная деятельность С. Алавердяна и совсем не изучена его деятельность в Сарыкамыше в 1917 г., куда он был послан партией для работы среди солдат и рабочих в период подготовки Великой пролетарской революции.

Получив свое революционное крещение в годы первой русской революции в Кутаиси, где действовал большевистский Имеретино-Мингрельский комитет, возглавляемый товарищем Сталиным, С. Алавердян в годы реакции, подъема рабочего движенияи первой мировой войны ведет активную большевисткую работу в Москве.

[1] ՀամԿ(բ)Պ ԿԿ-ին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 30, գ. 1, թ. 89։

[2] „Коммунист", 1936 г. № 5 (6-го января).

С 1915 года С. Алавердян находится в Сарыкамыше. В 1917 г., после Февральской революции, выполняя задание партии, он развивает энергичную деятельность по сплочению солдат (около 20 тысяч) Сарыкамышского гарнизона вокруг партии большевиков, готовит революционные силы армянского народа к решающей битве за власть Советов. В период подготовки и проведения Великой Октябрьской социалистической революции С. Алавердян ведет большую практическую работу. Он является руководителем Сарыкамышской большевистской организации, одним из организаторов Сарыкамышского Совета рабочих и солдатских депутатов, членом Исполкома и Военно-революционного Комитета. В 1917 г. Алавердян ежедневно выступает на рабочих и солдатских митингах и собраниях, поддерживает тесную связь с Кавказским Краевым и Тифлисским комитетами РСДРП (б), пишет статьи в большевистскую газету „Кавказский Рабочий", корреспондентом которой он являлся.

После победы октябрьского восстания в Петрограде С. Алавердян одним из первых горячо приветствует победу пролетарской революции и образование первого Совета Народных комиссаров, возглавляемого великими вождями пролетарской революции В. И. Лениным и И. В. Сталиным.

Широкая практическая деятельность С. Алавердяна в Сарыкамыше в 1917 г. является примером самоотверженной борьбы за ленинско-сталинский план подготовки и проведения пролетарской революции.

В 1918—20 гг., в период господства в Армении дашнаков и их англо-американских хозяев, С. Алавердян ведет большую революционную работу и организовывает борьбу рабочих и крестьян за установление советской власти в Армении. 14-го августа 1920 г., после поражения героического майского восстания, С. Алавердян был злодейски убит дашнаками. Перед смертью он сказал: „Помните хорошо, дело революции не умрет, рабочие и крестьяне Армении завоюют власть".

Это предсказание сбылось скоро. В ноябре 1920 года рабочие и крестьяне Армении, под руководством большевистской партии при братской помощи Красной Армии изгнали дашнаков и установили в стране советскую власть.